ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 17 >> 04 2012թ. N: 26 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԿԱՌԼԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006թ. հունիսի 26-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանելու մասին» թիվ 546-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման եւ հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Կառլեն Աբրահամյանին 2012 թվականի մայիսի 21-ից մինչև մայիսի 25-ը /ներառյալ/ և մայիսի 28-ից մինչեւ հունիսի 1-ը /ներառյալ/ գործուղել ք.Երևան, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա՝ մասնակցելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 12.12.2011թ. թիվ 951-Ա որոշմամբ հաստատված ծրագրով անցկացվող վերապատրաստման դասընթացներին:
2. Կառլեն Աբրահամյանի վերապատրաստման ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը վերապահել վարչության պետի տեղակալ Գագիկ Եղիազարյանին:
3. Գործուղման տևողությունը՝ 10 օր:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ս.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Իսկականի հետ ճիշտ է՝